Ներսես ՆԵՐՍԻՍՅԱՆ

«Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ» ամբիոնի հայցորդ, կիրառական ֆինանսների ֆակուլտետ, ՀՊՏՀ

https://orcid.org/0000-0002-0874-8828

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՈՒՂՂՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2025.4-36

Հիմնաբառեր. *Հայաստանի Հանրապետություն, կրթական ծախսեր, պետական բյուջե, հանրակրթություն*

Հոդվածում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կրթության ոլորտին ուղղվող հատկացումների կառուցվածքը և շարժընթացը: Վերլուծվել են կրթական ծախսերի տեսակարար կշիռը և ՀՆԱ-ի նկատմամբ փոփոխությունները վերջին տարիների ընթացքում: Նման վերլուծությունը հնարավորություն է ընձեռում առաջարկելու տարբերակներ բյուջեում կրթական համակարգի ծախսերի կառավարումն էլ ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ: Վերջին տարիների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև կրթության ֆինանսավորումն ընդհանուր ծախսերի մեջ կայուն է եղել, այնուամենայնիվ, դեռևս մնում է միջազգային չափանիշներից ցածր մակարդակում, ինչն էլ սահմանափակում է ոլորտի մրցունակության և կայուն զարգացման հեռանկարները:

Յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից մեկը լավագույն և արդիական կրթական համակարգի ապահովումն է: Եվ, հետևաբար, առավել քան անհրաժեշտ է կրթական ծախսերի և կառուցվածքի ուումնասիրումը:

Կրթության ոլորտին ուղղվող պետական բյուջետային հատկացումները կարևորագույն գործոն են երկրի տնտեսական զարգացման գործընթացում: Դրանք անմիջականորեն կապված են մարդկային կապիտալի ձևավորման և աշխատուժի որակական բնութագրերի բարելավման հետ: Կրթական համակարգի միջոցով բնակչությունը ձեռք է բերում մասնագիտական գիտելիք և հմտություններ, որոնք կիրառվում են աշխատանքի շուկայում, նպաստում արտադրողականության աճին և զբաղվա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ պետական բյուջեի կրթության գծով ծախսերի (մլրդ դրամ) և ՀՆԱ հարաբերակցությունը (տոկոս), 2018-2025 թթ.[1]

ծության հնարավորությունների ընդլայնմանը՝ համապատասխանելով ազգային տնտեսության պահանջներին:

Այս համատեքստում կրթության հիմնական նպատակը բնակչության մտավոր ներուժի ձևավորումն է՝ տնտեսության բոլոր ճյուղերի կայուն զարգացման ապահովման համար: Կրթության ոլորտին ուղղվող բյուջետային հատկացումները նպաստում են տնտեսական աճին՝ մարդկային կապիտալի զարգացման միջոցով: Միաժամանակ, կրթական համակարգի արդյունավետ գործունեությունն ու զարգացումը պայմանավորված են ֆինանսավորման բավարար մակարդակով, որի աղբյուրներն են պետական բյուջեն, համայնքային բյուջեները, մասնավոր ներդրումները, ինչպես նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների դրամաշնորհներն ու նվիրատվությունները:

Կրթության համար կատարվող ծախսերի մակարդակը, սովորաբար, արտահայտվում է ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերական ցուցանիշով: Սակայն այս մոտեցումը լիարժեքորեն չի արտացոլում հատկացումների կառուցվածքը և դրանց բաշխման արդարացիությունը տարբեր սոցիալական խմբերի և տարածքային միավորների միջև: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է իրականացնել կրթության ոլորտին ուղղվող պետական բյուջետային հատկացումների կառուցվածքային վերլուծություն, որը հնարավորություն կտա գնահատելու ֆինանսական հոսքերի նպատակային օգտագործման արդյունավետությունը և դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Գծապատկեր 1-ից կարելի է նկատել, որ 2018-2025 թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի՝ կրթության ոլորտին ուղղվող ծախսերը ցուցաբերում են կայուն աճի միտում: Եթե 2018 թվականին դրանք կազմում էին 121.6 մլրդ դրամ, ապա 2024 թվականին հասել են 231 մլրդ դրամի, իսկ 2025 թվականի բյուջեում նախատեսված է արդեն 362.6 մլրդ դրամ՝ գրեթե եռապատկվելով ութ տարվա ընթացքում: Այս աճը հատկապես արտահայտված է 2024-2025 թվականներին, երբ ծախսերը նախատեսվում է ավելացնել ավելի քան 130 մլրդ դրամով:

Սակայն կրթական բյուջեի բացարձակ ծավալի աճին զուգահեռ, դրա հարաբերակցությունը ՀՆԱ-ին մնացել է համեմատաբար կայուն՝ տատանվելով 1.9%-ից մինչև 2.8% սահմաններում: 2018-2024 թվականներին այս ցուցանիշը գտնվում էր 1.9%-2.3% միջակայքում, իսկ 2025 թվա-

[1] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ԱՎԾ տարեգրքի (2024 թ.), ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքների և ՄԺԾԾ (2026-2028 թթ.) տվյալները, https://minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Կրթության ծախսերի տեսակարար կշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%), 2018-2028 թթ.[2]

կանին նախատեսվում է զգալի աճ մինչև 2.8%: Սա վկայում է այն մասին, որ պետությունը տնտեսության համեմատական ծավալի նկատմամբ մեծացնում է ներդրումները կրթության ոլորտում: Ինչը ենթադրում է, որ թեև կրթության ֆինանսավորման ընդհանուր միտումը դրական է, այնուամենայնիվ, առկա են որոշակի տատանումներ, որոնք կարող են պայմանավորված լինել տնտեսական աճի տեմպերով և պետական բյուջետային քաղաքականության վերանայումներով:

Գծապատկեր 2-ի տվյալները ցույց են տալիս, որ 2018–2023 թթ. կրթության ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ընդհանուր ծավալում գրեթե շարունակաբար նվազել է՝ 2018 թ. 8.4%-ից 2023 թ. հասնելով 7.2%-ի: Սա վկայում է, որ թեև կրթության ծախսերի անվանական չափերն աճել են, դրանց բաժինը բյուջեի ընդհանուր ծախսերում համեմատաբար փոքրացել է: Նման միտումը ցույց է տալիս պետական ծախսերի կառուցվածքի վերաբաշխում՝ նախապատվությունը տալով այլ ոլորտներին, ինչը երկարաժամկետ կտրվածքով կարող է սահմանափակել կրթական համակարգի զարգացման հնարավորությունները:

Կանխատեսումների համաձայն, 2024 թ. սկսած, նկատվում է իրավիճակի որոշակի շրջադարձ, նախ կրթության ծախսերի տեսակարար կշիռն աճում է՝ հասնելով 9.1%-ի, իսկ 2026 թ. նույնիսկ 10.1%-ի: Սա կարևոր ցուցիչ է, որն արտացոլում է կրթական ոլորտի նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթությունների վերագնահատումը: Այնուամենայնիվ, 2027–2028 թթ. կրկին դիտվում է նվազում՝ մինչև 8.0–8.1%: Այս տատանումները վկայում են, որ կրթության ֆինանսավորման հարցում դեռևս բացակայում է կայուն և երկարաժամկետ կանխատեսելիությունը, ինչը պահանջում է հստակ ռազմավարական մոտեցում՝ կրթության ֆինանսավորման կայունության ապահովման համար:

Տվյալների վերլուծությունից պարզվում է, որ 2022–2025 թթ. ՀՀ պետական բյուջեից կրթության ոլորտին ուղղվող ծախսերի ամենամեծ մասնաբաժինը պատկանում է միջնակարգ ընդհանուր կրթությանը: Եթե 2022–2023 թթ. այդ ծախսերը կազմել են մոտ 72-73 մլրդ դրամ, ապա 2024 թ. դրանք միանգամից աճել են՝ հասնելով ավելի քան 153 մլրդ դրամի, իսկ 2025 թ.՝ գերազանցել 162 մլրդ դրամը: Սա վկայում է, որ կրթության ֆինանսավորման հիմնական ուղղվածությունը դեպի միջնակարգ ընդհանուր կրթությունն է՝ որպես ամենալայն շրջանակ ունեցող կրթական

[2] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ԱՎԾ տարեգրքի (2024 թ.), ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքների և ՄԺԾԾ (2026-2028 թթ.) տվյալները, https://minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ պետական բյուջեի՝ կրթության գծով ծախսերն ըստ ճյուղերի (մլն դրամ), 2022–2025 թթ.[3]

Կրթության ենթաոլորտներ	2022	2023	2024	2025
Միջնակարգ ընդհանուր կրթություն	73,095.30	71,913.60	153,257.30	162,092.70
Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	43,311.80	61,316.70	36,555.50	42,995.70
Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	38,434.70	41,539.40	62,445.60	56,474.20
Բարձրագույն կրթություն	18,340.20	15,003.00	15,718.80	15,998.60
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	11,933.20	12,098.60	13,759.50	13,576.90
Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	5,847.90	7,690.60	6,483.60	6,224.30

ենթահամակարգ:

Միաժամանակ, կրթության ծախսերի կառուցվածքում ամենացածր տեսակարար կշիռը մշտապես ունեցել է ըստ մակարդակների չդասակարգվող կրթությունը, որի ծախսերը 2022 թ. կազմում էին ընդամենը 5.8 մլրդ դրամ և 2025 թ. հասել են մոտ 6.2 մլրդ դրամի: Սա վկայում է, որ այս ուղղության նշանակելիության մակարդակը համեմատաբար ցածր է բյուջետային քաղաքականության մեջ, և դա համեմատաբար փոքր ազդեցություն է թողնում ընդհանուր կրթական համակարգի վրա:

2025 թվականի պետական բյուջեից ՀՀ ԿԳՄՍՆ-ին է նախատեսվում հատկացնել շուրջ 362.6 միլիարդ դրամ, որն ուղղվելու է կրթության տարբեր մակարդակների և ոլորտների զարգացմանը: Առավել մեծ ծախսեր են նախատեսված հանրակրթության (132.8 մլրդ դրամ) և կրթական ու նախադպրոցական հաստատությունների հիմնման, կառուցապատման և բարելավման (84.4 մլրդ դրամ) ծրագրերի գծով, ինչը վկայում է, որ առաջնահերթությունը տրվում է դպրոցական կրթության մատչե-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ ԿԳՄՍՆ՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերը, 2025 թ.[4]

Ծրագիր	Նախատեսված հատկացումներ (մլն դրամ)
Մասնագիտական կրթություն և ուսուցում	15,268.7
Բարձրագույն և հետբուհական կրթություն	14,164.3
Հանրակրթություն	132,760.8
Արտադպրոցական դաստիարակություն	3,940.7
Ապահով դպրոց	791.0
Դպրոցների սեյսմիկ անվտանգություն	10,704.8
Կրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	84,420.2
Կրթության որակի ապահովում	15,757.4
Համընդհանուր ներառական կրթություն	3,804.0
Մշակութային և գեղագիտական դաստիարակություն	1,003.0
Միջազգային և սփյուռքի համագործակցություն	398.3
ՏՀՏ ներդրում կրթության մեջ	876.7
Նախադպրոցական կրթություն	4,031.0

[3] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմնվելով ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքների վրա:
[4] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմնվելով ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագրի վրա, https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

լիությանը և ենթակառուցվածքների զարգացմանը:

Միաժամանակ, էական միջոցներ են նախատեսվել կրթության որակի ապահովման (15.8 մլրդ դրամ) ու մասնագիտական կրթության և ուսուցման (15.3 մլրդ դրամ) ուղղություններով, որոնք կարևոր են աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման համար: Ամենափոքր ծախսերը նախատեսված են միջազգային և սփյուռքի համագործակցության (398.3 մլն դրամ) և Ապահով դպրոց (791 մլն դրամ) ծրագրերի համար, ինչը պայմանավորված է դրանց ավելի նեղ թիրախավորմամբ: Ընդհանուր առմամբ, բյուջետային բաշխումն ընդգծում է կրթության մատչելիության, որակի և ենթակառուցվածքների զարգացման փոխկապակցվածությունը:

ՀՀ-ում կրթության ոլորտին ուղղվող պետական բյուջետային հատկացումների կառուցվածքային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018–2023 թվականների ընթացքում կրթության ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում հիմնականում նվազել կամ պահպանվել է 7–8%-ի սահմաններում, մինչդեռ 2024–2025 թթ. արձանագրվել է աճ, որը հասել է մոտ 9%-ի: Այս միտումները վկայում են, որ կրթության ֆինանսավորման շարժընթացը պայմանավորված է ոչ միայն երկրի տնտեսական և բյուջետային հնարավորություններով, այլև պետական քաղաքականության փոփոխվող առաջնահերթություններով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ֆինանսների նախարարություն, «Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներ», 2024–2026 թթ., https://minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/
2. ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t
3. ՀՀ ֆինանսների նախարարություն, «Միջնաժամկետ պետական ծախսերի ծրագրեր (ՄԺԾԾ) 2026–2028 թթ.», https://minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/
4. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ). (2025). «Տնտեսության հիմնական ցուցանիշներ», https://armstat.am/am/?nid=12&id=01001

Нерсес НЕРСИСЯН
Соискатель кафедры "Финансовые рынки и институты", факультет прикладных финансов, АГЭУ

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

СТРУКТУРНЫЙ АНАЛИЗ ГОСУДАРСТВЕННЫХ БЮДЖЕТНЫХ АССИГНОВАНИЙ НА СФЕРУ ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В статье изучена структура ассигнований, выделяемых из государственного бюджета Республики Армения на сферу образования и ее динамика. Проанализирована доля расходов на образование и ее изменения по отношению к ВВП за последние годы. Подобный анализ дает возможность предложить варианты, которые позволят улучшить управление бюджетными расходами, направленными в сферу образования, и сделать расходы более эффективными. Сравнительный анализ последних лет показывает, что несмотря на стабильность финансирования образования в общем объеме расходов, оно остается ниже международных стандартов, что ограничивает перспективы конкурентоспособности и устойчивого развития сферы.

Ключевые слова: *Республика Армения, расходы на образование, государственный бюджет, среднее общее образование*

Nerses NERSISYAN
Applicant at the Chair of "Financial Markets and Institutions",
Faculty of Applied Finance, ASUE

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

STRUCTURAL ANALYSIS OF STATE BUDGET ALLOCATIONS TO EDUCATION IN THE REPUBLIC OF ARMENIA

The paper examines the structure and dynamics of allocations to education in the state budget of the Republic of Armenia. It analyzes the share of expenditure on education and its changes in relation to GDP in recent years. The analysis of the volume and structure of state budget expenditures of the Republic of Armenia on education makes it possible to identify options that will improve the management of budget expenditures directed toward the education system and to enhance the effectiveness of the education spending. A comparative analysis of recent years shows that, despite the relative stability of education funding within total expenditures, it remains below international standards, which limits the prospects for competitiveness and sustainable development of the sector.

Keywords: *Republic of Armenia, education expenditures, state budget, general education*